# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՊՌՈՇՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
proshyan.kotayq@mta.gov.am

N 437
*01 սեպտեմբեր 2020թ.*

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավետիսյան

Ի պատասխան Ձեր 2020 թվականի օգոստոսի 13-ի թիվ 01/08.1/06110-2020 գրության ուղարկվում է Պռոշյանի համայնքապետարանում ս/թ սեպտեմբերի 8-ին կայանալիք Պռոշյան համայնքի ավագանու թիվ 6-րդ հերթական նիստի որոշման նախագծերը:

Առդիր՝ 3 նախագիծ:

X

Համայնքի ղեկավար՝ Արթուր Մուրադյան

Կատ. Առաջատար մասնագետ՝ Անահիտ Աբրահամյան

ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ 6-ՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԵՎԱԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 15-րդ հոդվածով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

**1. Հաստատել համայնքի ավագանու թիվ 6-րդ հերթական նիստի օրակարգը՝ բաղկացած հետևյալ հարցերից.**

**1) Հողամասի նպատակային նշանակության փոփոխության մասին**

2) Պռոշյան համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 22-ի թիվ 4-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

**2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՊՌՈՇՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
Սևակ Գաբրիելյանը

ՆԱԽԱԳԻԾ 25

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Գևորգ Արշակի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող 07-053-0377-0035 կադաստրային ծածկագրով 0.075 հա գյուղատնտեսական նշանակության գործառնական նշանակությունը վարելահող հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա, ըստ գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի:

2. Հողի նպատակային նշանակության փոփոխությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
Սևակ Գաբրիելյանը

ՆԱԽԱԳԻԾ 26-Ն

ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի ԹԻՎ 4-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎՌԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի դրույթներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Պռոշյան համայնքի ավագանու 2020թ.-ի հունվարի 22-ի <<Պռոշյան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 4-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի
2. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
Սևակ Գաբրիելյանը